ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 26 հունվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Արամ Սարգսյանն ու Կարապետ Ռուբինյանը 14.01.2011թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի (այնքանով, որքանով նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով դատարաններին լիազորում է գործի քննության արդյունքում կայացնել դատական ակտ՝ դատավարական օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով, այդ թվում՝ մերժելով բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դիմողները միջնորդություն են ներկայացրել պետական տուրքից ազատելու մասին՝ վկայակոչելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի՝ քրեական դատավարության մասնակիցների կողմից պետական տուրքի վճարում նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով՝ բավարարել դիմողների միջնորդությունը՝ պետական տուրքից ազատելու վերաբերյալ:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հունվարի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/1-1